

ՍԱՂՄՈՍ 72

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Արդար թագավորի իշխանությունը <u>MT ներածություն</u> Սողոմոնի <i>Սաղմոս</i>	Մեսիայի տիրակալությանը փառքը և տիեզերականությունը	Թագավորի վրա Աստծո օրհնության համար աղոթք	Աղոթք Թագավորի համար	Խոստացված Թագավորը
72:1-4	72:1-4	72:1-4	72:1-5	72:1-2 72:3-4
72:5-7	72:5-7	72:5-7	72:6-7	72:5-6 72:7-8
72:8-11	72:8-11	72:8-11	72:8-11	72:9-10p 72:10q-11
72:12-15	72:12-15	72:12-14 72:15-17	72:12-14 72:15-17	72:12-13 72:14-15
72:16-17	72:16 72:17			72:16 72:17
72:18-19	72:18-19	72:18-19	72:18-19p 72:19q	72:18-19
72:20	72:20	72:20	72:20	72:20

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Սա մի ծավալուն աղոթք է (այսինքն՝ «Տո՛ւր» - BDB 678, KB 733, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) արդար թագավորի և նրա որդու համար (հավանաբար ակնարկ է 2 Թագավորաց 7, որն ի վերջո վերաբերում է Մեսիային):

1. Քո դատաստանները – NASB, NKJV, JPSOA
 ա. քո արդարադատությունը – NRSV, REB
 բ. քո իսկ ազնիվ դատաստանը – NJB
2. Քո արդարությունը – NASB, NKJV, NRSV, JPSOA, REB – քո իսկ փրկող արդարադատությունը, NJB

Բ. Այս Սաղմոսը բովանդակում է ՀԿ-ի «Նոր Դար» հասկացությունը: Ուխտի պահանջները և խոստումները պտուղ են տալիս: Եթե այս սաղմոսը թագադրման երգ է, արքայական չափազանցություն է, սակայն եթե այն նոր դարի նկարագրություն է, այն իրականանում է Քրիստոսի մեջ: Այս Սաղմոսը ՆԿ-ում չի մեջբերվում, սակայն հրեական և Քրիստոնեական աղբյուրները այն դիտարկում են որպես Մեսիական: Տես Ալֆրեդ Էդերշեյմի *Հիսուս Մեսիայի կյանքը և ժամանակները*, Հավելված IX, էջ՝ 719:

Գ. Այս Սաղմոսում գերակշռում են ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅԵՐԸ: NASB, NRSV և JPSOA, տես՝ Սաղմ. 72:2-4,5-7,8-11,15-17,19 որպես ԱՆԿԱՏԱՐՆԵՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով (այսինքն՝ «թող . . .», «թող որ . . .»), սակայն NKJV և NJB դիտարկում են այս բոլորը որպես ԱՆԿԱՏԱՐՆԵՐ (այսինքն՝ խոսքեր, թե ինչ է անելու Մեսիան): Առկա են չորս ՀԱՅՅԱԿԱՆ ԲԱՅԵՐ այս համատեքստում (այսինքն՝ Սաղմ. 72:8, 15, 16, 17):

Դ. Սաղմոս 72:20 ամփոփիչ նշում է Սաղմոսացի Երկրորդ Գրքի (այսինքն՝ Սաղմոս 42-72) հետագա խմբագրի կամ հավաքագրողի կողմից:
 Նաև հնարավոր է, որ Սաղմոս 72:18-19 ընդգրկում է Սաղմոսների Երկրորդ Գրքի փակման դոքսոլոգիան:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 72:1-4

¹Դատաստանների թագավորին տո՛ւր, ո՛վ Աստված,
Ու արդարությունդ՝ թագավորի որդուն:

²Նա արդարությամբ կդատի Քո ժողովրդին
Ու աղքատներիդ՝ իրավունքով:

³Լեռները խաղաղություն են բերելու ժողովրդին,
Ու փոքրիկ բլուրները՝ արդարություն:

⁴Ժողովրդի աղքատներին իրավունք է տալու,
**Կարիքավորի երեխաներին ազատելու է,
 Իսկ բռնակալին ջախջախելու է:**

72:1-4 Այս պարբերությունը աղոթում է աստվածահանճ վարքի համար, որով նոր թագավորը (այսինքն՝ Մեսիան) պետք է իշխի:

1. դատի (ՀՈԳՆԱԿԻ MT-ում հավանաբար արտահայտում է որակ) արդարությամբ, տես՝ Եսայի 9:7, 11:2-5, 32:1, «արդարություն» բառի համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ
2. արդարությամբ կդատի (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԱՏԱՎՈՐԸ, ԴԱՏԱՍՏԱՆԸ, ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՍԱՅԻ ԳՐԶՈՒՄ), տես՝ Սաղմ. 82:3:
3. խաղաղություն են բերելու (արդար դատավորի իշխանությունը պատճառ է լինելու, որ երկիրը բարգավաճի, այսինքն՝ Դևտացիների 26, 2 Օրինաց 27-30):
4. իրավունք է տալու, տես՝ Եսայի 11:4
5. բռնակալին ջախջախելու է

Ուշադրություն դարձրե՛ք Աստծո ժողովրդին նկարագրելու համար կիրառված տերմիններին՝

1. Քո ժողովուրդը, Սաղմ. 72:2
2. Քո աղքատներին, Սաղմ. 72:2,4 (JPSOA, «տկարները»)
3. կարիքավորի երեխաները, Սաղմ. 72:4

Աստծո ամբողջ ընտանիքը պաշտպանվելու է և քաջալերվելու:

Այստեղ ձևավորվել է լարվածություն ուխտի համայնքի ներսում աղքատի և հարուստի միջև: Այս լարվածությունը փոխանցվել է հավատացյալ, հավատարիմ հետևորդների և հեթանոս նվաճողների՝ հարձակվողների գերեվարումներից հետո: Աղքատը, կարիքավորը և նեղյալն են, որ վերականգնվելու են: ՅԱՀՎԵՆ հոգ է տանելու նրանց և պաշտպանելու (2 Օրինացի թեմաների զարգացումը): Նա է նրանց միակ հույսը և փրկիչը (տես՝ Սաղմ. 103:6, 146:7):

72:3 Այս նկարագրությունը կարող է մի քանի նշանակություն ունենալ:

1. Սարերը . . . բլուրները նկատի ունեն աստվածահաճո առաջնորդներին
2. սարերը . . . բլուրները գործում են որպես բարգավաճման անձնավորված պատգամաբերներ (այսինքն՝ ուխտի օրհնություններ)
3. սարերը . . . բլուրները վերաբերում են Խոստացյալ Երկրի մշտական կայունությանը՝ ամրությանը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 72:5-7

⁵Քեզանից վախենալու են այնքան ժամանակ
Քանի դեռ կմնան արեգակն ու լուսինը՝ սերնդից սերունդ:
⁶Նա հնձված խոտի պես եկող անձրևի պես է իջնելու՝
Տեղումների պես, որոնք երկիրն են թրջում:
⁷Նրա օրերում արդարը ծաղկելու է,
Մեծ խաղաղություն է լինելու մինչև այլևս լուսին չլինի:

72:5-7 Այս պարբերությունը շեշտադրում է երկու խնդրանք:

1. որ Աստծո ժողովուրդը շարունակում է վախենալ՝ ակնածել Նրանից
2. որ այս նվիրումը շարունակվում է ժամանակի ընթացքում (այսինքն՝ մինչ արևը և լուսինը կան, տես՝ Ծննդ. 8:22, Սաղմ. 89:36-37)

Եթե դրանք կան՝ մնում են, ապա Մովսիսական ուխտից առատության խոստումները նույնպես կշարունակվեն (տես՝ Դևտացիների 26, 2 Օրինաց 27-30): Թագավորը և ժողովուրդը պետք է կատարեն ուխտի պայմանները:

72:5

NASB, JPSOA «նրանց»
NKJV «նրանք»
NRSV, NJB, REB, LXX «նա»

MT տալիս է ՀՈԳՆԱԿԻ, հետևաբար, այն կարող է վերաբերել՝

1. ուխտի ժողովրդի ակնածանքին

2. Մեսիական թագավորի (այսինքն՝ ՄԵԾԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՀՈԳՆԱԿԻՆ) հանդեպ ակնածանքին



NASB, NKJV, REB, JPSOA «վախենալ»
NRSV, NJB «ապրել»
TEV «երկրպագել»
NJB, LXX «համբերել»

UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 309) գնահատում է «մնալ» բառը “C” (բավականին կասկածելի): Սա հետևում է LXX թարգմանությանը: Այն համապատասխանում է ավելի շուտ զուգահեռականությանը:

72:6 «ջուր» Այս բառը (BDB 284, KB 283) ՀԿ-ում միայն այստեղ է գտնվում: Այն կարծես թե *Hiphil* «ընկղմել» ԲԱՅԻՑ է. Արաբերենում այս արմատը նշանակում է «արցունքները հոսել»:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 72:8-11

⁸Ծովից ծով է տիրելու նա ու գետից մինչև երկրի ծայրամասերը:

⁹Նրա առջև անապատի բնակիչները ծնկի են իջնելու

Ու նրա թշնամիները փոշի են լիզելու:

¹⁰Թարսիսի ու կղզիների թագավորները ընծա են մատուցելու,

Շաբայի ու Սաբայի թագավորները պարզ են բերելու:

¹¹Այո՛, բոլոր թագավորները խոնարհվելու են նրա առաջ,

Բոլոր ազգերը ծառայելու են նրան:

72:8-11 Մեսիայի թագավորությունը կլինի՝

1. տիեզերական (այսինքն՝ կիրառվում է ՀՄԱ-ից տերմիններ)

ա. ծովից ծով (տես՝ Չաբ. 9:10)

բ. գետից (Եփրատից) մինչև երկրի ծայրերը (այսինքն՝ Սողոմոնը թագավորեց այս տարածաշրջանում)

2. Բոլոր ժողովուրդները Նրան պատվելու են և ընծա են բերելու, տես՝ Եսայի 49:23

Այս տիեզերական իշխանությունը (տես՝ Սաղմ. 2:8, 59:13, 65:2, 67:7, Եսայի 45:22, 52:10, Սիբիա 5:4) ակնհայտ եզրահանգում են Ծննդ. 1:26-27 և 12:3-ից: Եթե միաստվածությունը ճիշտ է, Ադամի բոլոր զավակների փրկությունն է նպատակը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ, Սաղմոս 2 ևս մեկ Մեսիական Սաղմոս է):

72:9

NASB «քոչվորներ»
NKJV (MT) «անապատում ապրողները»
NRSV «թշնամիներ»
TEV «անապատի ժողովուրդը»
NJB «զազանները»
LXX «Եթովպիացիները»
REB «անապատի ցեղերը»

Այս բառը (ֆ, BDB 850 II, KB 1020) կարող է նշանակել՝

1. ախոյաններ ֆ BDB 865 III (ուղղում, սակայն ավելի լավ է համապատասխանում Սաղմոս 72:9բ-ի համազոր «թշնամիներ» խոսքին)

2. անապատի կենդանիներ – Սաղմ. 74:14, Եսայի 13:21, 23:13, 34:14, Երեմ. 50:39 (որի «չորություն»՝ BDB 851, տես՝ Երեմ. 50:12, 51:43):

3. հնարավոր է (տես՝ NEB) որ #2 նկատի ունի անապատի դևերին (տես՝ ստորև տրված Հատուկ Թեման)

4. պատվիրակ կամ պատգամաբեր - ԴՅ (BDB 851 II), տես՝ Ես. 18:2

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԻՎԱԿԱՆԸ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

❖ **«նրա թշնամիները փոշի են լիզելու»** Սա ՀՄԱ պատկեր է (այսինքն՝ պատերի փորագրություններ և նկարներ) ինչ-որ մեկի, որը գլուխ է խոնարհել (տես՝ Սաղմ. 72:9ա) մինչև գետին: Սրան ավելացվել է գրական «փոշին լիզել» դարձվածքը (BDB 535, KB 525, *Piel* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Եսայի 49:23, Միքիա 7:17), որը մատնանշում է խոնարհվողի պարտությունը և ստորադասությունը:

72:10 «Թարսիս» Այս տեղանունը (BDB 1077, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԹԱՐՍԻՍ) լարող էր վերաբերել՝

1. հարավային Իսպանիայում՝ Ատլանտյանի կողմում գտնվող մի քաղաքի, որը Փյունիկյան գաղութ էր (այսինքն՝ Տարտեսուս):
2. Սարդինիայի կղզին
3. հյուսիսային Աֆրիկայի մի քաղաք (Կարթագենը Փյունիկեի գաղութ էր)
4. հեռու նավահանգստի մի փոխաբերություն
5. ծովի խորքերը հասնող առևտրական նավի մի տեսակ
6. մրցակից ծովային մի ազգ (տես՝ 3 Թագ. 10:22)

❖ **«կղզիներ»** Այս բառը (BDB 15 I) սովորաբար նշանակում է «ծովեզր» կամ «կղզի»: Այն մատնանշում է տալիս հեռավոր ազգերին (տես՝ Եսայի 40:15, 66:19, Երեմ. 25:22, 31:10): Սա համընկնում է այս պարբերության նկարագրության հետ (այսինքն՝ Մեսիայի տիեզերական թագավորությունը):

❖ **«Ճաբա»** Սա վերաբերում է հարավային Աֆրիկայում ապրող Քամի ազգին կամ ցեղին:

❖ **«Սաբա»** Սա վերաբերում է հյուսիս-արևելյան Աֆրիկայի մի տարածաշրջանի, հաճախ նույնացվում է Եգիպտոսի և Քուշի հետ (տես՝ Ես. 43:3, 45:14):

Այս տեղանունները նշելու նպատակը վերադառնում է Սաղմ. 72:8 և 11-ի հաստատմանը:

NASB (ԹԱՐՍԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 72:12-15

¹²Քանի որ կարիքավորին փրկելու է նրա աղաղակելու պահին,
Նաև՝ աղքատին ու նրան, որ օգնական չունի:

¹³Խղճալու է աղքատին ու կարիքավորին
Եվ ազատելու է կարիքավորների անձերը:

¹⁴Խաբեությունից ու բռնությունից փրկելու է նրանց անձը,
Եվ նրանց արյունը պատվական է լինելու Իր առջև:

¹⁵Նա կապրի, և Ճաբայի ոսկին նրան կտրվի,
Ու մշտապես աղոթք կմատուցվի նրա համար,
Ամեն օր կօրհնեն նրան:

72:12-15 Սաղմ. 72:12-14-ում ԱՆԿԱՏԱՐՆԵՐԸ բնութագրում են Մեսիայի թագավորությունը (չի կիրառվում ՅԱՀՅԱԿԱՆ իմաստով): Համեմայն դեպս Սաղմ. 72:15-ում NASB վերադառնում է ԱՆԿԱՏԱՐՆԵՐԻՆ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով:

Ուշադրություն դարձրեք Աստծո ժողովրդի անունների և առանձնահատկությունների գանազանությունը (տես՝ Սաղմ. 72:2-4):

1. կարիքավոր, Սաղմ. 72:12
2. նեղյալ, Սաղմ. 72:12
3. աղքատ, Սաղմ. 72:13
4. կարիքավոր, Սաղմ. 72:13

Ինչպես Սաղմ.72:4 անվանում է իրենց թշնամիներին «բռնակալներ», այստեղ նրանք բնութագրվում են որպես «բռնակալ» և «բռնություն գործողներ»: Դժվար է Սաղմոսներում այս մարդկանց ինքնությունը հասկանալը:

1. անհավատարիմ խորայելացիներ
2. հեթանոս հարևաններ
3. օտարազգի նվաճողներ

Մեսիական թագավորը՝

1. ազատելու է աղքատին ու կարիքավորին
2. խղճալու է աղքատին ու կարիքավորին
3. փրկելու է կարիքավորների կյանքը (տես՝ 69:18)
4. փրկելու է ուխտի ժողովրդին բռնությունից և խաբեությունից
5. նրանց արյունը՝ կյանքերը պատվական է լինելու Իր առջև (տես՝ Սաղմ. 116:15)

72:14 «նրանց արյունը պատվական է լինելու նրանց առջև» Մեսիան հակադրվում է «բռնակալի» հետ (տես՝ Սաղմ. 72:4): Նա անկեղծությամբ հոգ է տանելու աղքատի, կարիքավորի և նեղյալի համար (տես՝ Սաղմ. 116:15): Նա Արարչի սիրտն ունի (տես՝ Ծննդ. 1:26,27): Բոլոր մարդիկ կարևոր են Նրա համար:

72:15 Այս համարն ունի երկու շեշտադրություն՝

1. առաջին երկու ԲԱՅԵՐԸ առնչվում են Մեսիական թագավորի հետ՝
ա. Նա կապրի – BDB 310, KB 309, *Qal* ՀԱՅՑԱԿԱՆ
բ. Նրան հարկ կտրվի – BDB 678, KB 733, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով:
2. հաջորդ երկու ԲԱՅԵՐԸ առնչվում են Իր ժողովրդի հետ՝
ա. մշտապես աղոթք մատուցեն Նրան – BDB 813, KB 933, *Hithpael* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
բ. ամեն օր կօրհնեն Նրան – BDB 138, KB 159, *Piel* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով

Ակնհայտ է, որ Սաղմ. 72:15ա գործածում է տարածված թագավորական արտահայտություն (այսինքն՝ «կեցցե թագավորը»), սակայն այն մի նոր իմաստ է ստանում ՆԿ-ում Մեսիայի մարմնավորման և Երուսաղեմ հաղթական մուտքի հայտնության լույսի ներքո:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 72:16-17

**¹⁶Յորենի առատություն է լինելու երկրում,
Լեռներին զագաթներին. նրա պտուղը Լիբանանի պես ծածանվելու է.
Եվ քաղաքից եղողները երկրի խոտի պես ծաղկելու են:
¹⁷Նրա անունը հավիտյան մնալու է:
Որքան ժամանակ, որ արեգակը մնա,
Նրա անունն էլ կմնա:
Ու մարդիկ նրանով կօրհնվեն.
Բոլոր ազգերը օրհնյալ են անվանելու նրան:**

72:16-17 Թե՛ Սաղմոս 72:16 և թե՛ 17-ը սկսում են ՀԱՅՑԱԿԱՆ ԲԱՅՈՎ, որը համատեքստին թույլ է տալիս տեսնելու բոլոր ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅԵՐԸ այս երկու համարներում որպես նշանակությամբ ՀԱՅՑԱԿԱՆ:

Այս պարբերությունը շարունակում է առատության թեման, որը սկիզբ էր առել Սաղմ. 72:3,5-6-ում: Այս առատությունը Ղևտացիների 26 և 2 Օրինաց 27-30 ուխտի խոստումներն են:

Սաղմոս 72:17 կենտրոնանում է Մեսիայի թագավորության վրա:

1. Նրա անունը հավիտյան է մնալու – գործածվում է ՅԱՀՎԵԻ համար Սաղմ. 135:13-ում

2. որքան ժամանակ որ արեգակը կմնա, Նրա անունն էլ կմնա (տես՝ Սաղմ. 72:5-7), «ավելանալ» ԲԱՅԸ ՀԿ-ում միայն այստեղ է գտնվում (BDB 630, KB 696, տես՝ NIDOTTE, հատոր 3, էջ՝ 1161)։ LXX տալիս է «մնալ» Սաղմոս 72:17-ին զուգահեռ։
3. ու մարդիկ Նրանով կօրհնվեն (այսինքն՝ ակնարկ է Ծննդ. 12:3, 22:18, Աբրահամի ուխտը, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ)
4. բոլոր ազգերը օրհնյալ են անվանելու Նրան (զուգահեռ է #3)

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 72:18-19
¹⁸Օրհնյալ լինի ՏԵՐ Աստվածը՝ Իսրայելի Աստվածը,
 Միայն Ինքն է, որ հրաշքներ է կատարում:
¹⁹Եվ հավիտյան օրհնյալ լինի Նրա փառավոր անունը.
 Եվ ամբողջ երկիրը թող լցվի Նրա փառքով: Ամեն ու ամեն:

72:18-19 Ուշադրություն դարձրեք, թե ինչպես է Սաղմ. 72:17 (Մեսիայի մասին) զուգահեռվում Սաղմ. 72:18-ում (Իսրայելի ուխտի Աստծո վերաբերյալ): Թագավորը, ինչպես նաև Մեսիան, պետք է արտացոլի ՅԱՀՎԵԻ բնավորությունը:
 Դարձյալ նկատե՛ք Սաղմ. 72:19-ում տիեզերական տարրը (տես՝ Թվոց 14:21, Եսայի 6:3):

72:18 «հրաշքներ է կատարում» Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՔԱՆՉԵԼԻ ԲԱՆԵՐ

72:19 «Ամեն» Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՄԵՆ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 72:20
²⁰Հաստի որդու՝ Դավթի աղոթքները վերջացան:

72:20 Այս համարը խմբագրական նշում է, ցույց տալու Սաղմոսների Երկրորդ Գրքի ավարտը: Հնարավոր է, որ Սաղմ. 72:18-19 նաև դոքսոլոգիական փկման խոսք է (տես՝ Սաղմ. 41:13, 89:52) ամբողջ Երկրորդ Գրքի համար:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Արդյո՞ք այս Սաղմոսը Սողոմոնի մասին է, թե՞ պագա Մեսիայի:
2. Արդյո՞ք Սողոմոնի թագավորությունը համապատասխանում է Սաղմ. 72:8-ին:
3. Ինչպե՞ս է ՀԿ-յան այս խոսքերը, որոնք վերաբերում են բոլոր ազգերի վրա Իսրայելի գարակայությանը, համապատասխանում ՆԿ-ի հետ:
4. Ո՞ւմ են ներկայացնում «աղբատները»:
5. Ինչպե՞ս է Սաղմ. 72:16 կապված Ծննդոց 12-ի հետ:
6. Արդյո՞ք Սաղմ. 72:18-19 և 20 հանդիսանում են այս Սաղմոսի մի մասը, թե՞ Գիրք Երկրորդի փակման խոսքեր են: